

Արդ՝ մեք այն պատասխանը ընկած է գոհ լինելով, կը յայտաբարեմք, որ մեք Պատուելոյն հետ ու միշտ գործ մը չունիմք. թէ պէտի ինքն միքանի հարցմունիք և առաջարկութիւններ կ'ընէ. բայց մեք նոցա պատասխաները՝ մեր արդէն խօսածներէն դատիւր գիտնական հռչակուած գլխոյն և իւր նոր արթնյած խղճմանիքին կը ձգեմք. և բացարձակապէս կ'ըսեմք, որ այդպիսի նիւթոց վերայ մեզ հարցումներ. չ'ուզրէ, վասն զի ըստ պիտի պատասխանիմք և վասն զի նոցա պատասխաններն արդէն տրուած և ճըշմարիտ Հայերու և Ճմարիտ Քրիստոնեաներու. հոգեշունչ խօսքերովը մերժուած լմնցած են, զորս ինքը քաջ գիտէ, և դարձեսու կը զրկեմք զինքը դէպ՚ի պատամութեանց էջերը, ուր պիտի տեսնէ թէ ոչ միայն խօսքով և զրով, այլ և հալածանօք, տարագրութեամբ եւ արեամբ իսկ պատասխանած Են դոցա, և մեք չեմք կամիր արդէն վըճ-

ռուած եւ լրացած բան մը՝ առանց կարեւորաթեան խօսքի նվ թը ընել և վերսախն վիճաբանութեան դուռ բաւնալ:

Սա ալ չը մոռնամք աւետելու ջերացնց Պատուելին, որ մնչպէս ինքը հաւատարիմ է Հռովմէական եկեղեցւոյն, թող գիտնա՛, որ նորա եւս նոյն չափ հաւատարիմ են իրեն. քանզի ի շնորհս Տէրոյենց Պատուելոցն Ուեպտեմբերի Սիօն ամսաթերթը՝ Պապական միարանութեան մը կողմանէ յետ գարձուեցաւ։ Այս պատճառուաւ մեք ալ այդպիսի նպատակաց ծառայող ներու ամեն հարցմանց և առաջարկութեանց պատասխանելու պարտաւոր չեմք Ճանչնար զմեզ, այլ Ճշմարտութեան համար խօսածնիս և Պատուելոցն այս վերջի խօստավանութիւնը բաւական համարելով, կը վերջացընեմք խօսքերնիս։

Ո. Վ. Ուղիոսկան։



## ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

**ՅԱԿՍԻ** Եպիսկոպոս Տիգրանակերպի, Միաբան Սրբած Աթոռոց, կաթուածահար մահուամբ առ Տէրփիսկեցաւ Յունիարի 27 ին ՚ի սուդ համակելով բոլոր Միաբանութիւնն։

Կաթուածի ստակալի հարուածէն ընդարմանալով՝ չը կարաց ամսնեւին

խօսակցիլ Միաբան Հարց և Եղբարց հետ։ Բժշկաց չանքն ու աշխատութիւնն ՚ի գերեւ ելին, եւ մի ժամում մէջ կաթուածի հարուածն տարածեցաւ բոլոր մարմնոցն մէջ, անխօս և անբարբառ քանի մի ակնարկ ձգեց շուրջ պատեսալ Հարց և Եղբարց վե-

բայ և իւր հոգին աւանդեց :

Անտինիուլ մահէն ժամ մի առաջ  
ուրախ էր և զուտրթ և նոյն օրն ձաւ  
շած էր քանի մի Միաբանն Հարց հետ  
իւր սենեկին մէջ եւ պարտէղ ելած  
շրջագայելու ։ Գոգչես Նախախնա-  
մութիւնն տնօրինած էր, որ վերջին ա-  
ւուր մէջ յատկապէս 'ի ձաշ հրաւի-  
րելով՝ խնդակցի իւր Միաբան եղարց  
հետ :

Հանդուցելցն յուզարկաւորու-  
թիւնն կատարուեցաւ շքեղ հանդի-  
սիւ, 'ի ներկայութեան Միաբան Հարց,  
Եղարց, Ուխտաւորաց և բազմաթիւ  
օտարականաց : Օծման արարողու-  
թիւնն կատարեց ինքնին Ս. Պատրի-  
արքին արտասուելով եւ յարտասուս  
շարժելով բոլոր հանդիտականներն :  
Օծման արարողութենէն զինի դամ-  
բանական խօսեցաւ Ս. Պատրիարքն,  
յայտնելով՝ որ հին Միաբաններէն մին  
է Հանդուցեալ Յակոբ Եպիսկոպոսն  
և իւր 58 ամեայ կենաց շրջանի մեծա-  
գոյն մասն Ս. Աթոռոյս մէջ անցու-  
ցած է . Դպրութեան, Սարկաւագու-  
թեան և Վարդապէտութեան ասաի-  
ձանն Ս. Աթոռոյս մէջ առած է : Եպիս-  
կոպոսացած է 'ի Ս. Էջմիածին Մատ-  
թէսս Կաթողիկոսէն եւ վարած է  
։ Ս. Աթոռոյս մէջ զանազան պաշտօն-  
ներ, այն է Գրագրութեան, Ս. Տե-  
ղեաց Տեսչութեան, Թարգմանու-  
թեան, Ժողովական անդամութեան  
և այցելութեան 'ի Հայաստան :

Հանդուցեալն թաղուեցաւ Սուրբ  
Փրկչաց վանուց գտւթին մէջ, Դաւիթ  
Եպիսկոպոսի շիրմին մօտ, որ իւր հո-  
գեւոր հայրն էր և որուն սպասաւո-  
րած էր երկար ժամանակ :

Այսպէս անկայուն է ահա մարդոց  
երկրաւոր կեանքն, այսպէս անիմանա-  
լի է Աստուծոյ Նախախնամութիւնն :  
Ուստի կը մնայ ճեղ միայն օշհնել Առ-

տուծոյ կամբն և հանգիստ ու երա-  
նութիւն մազթել հանգույելցին :

## ՏԻՌԻ ԴԵՊ ՄԸ

Բատ Տնօրէնութեան Ս. Աթոռոյս  
Վարչութեան Արք . Խորէն վարդա-  
պետն Հայֆոյ և Աքքեայ երթալուլ  
տեղոյն քանի մի Հայազգի ընտանեաց  
հոգեւոր պիտոյից մատակարարու-  
թեան համար և վերադառնալով ան-  
տի հետեւեալ գէպքը կը հաղորդէ  
Խմբադրութեանս :

"Քանի մը ամիս առաջ կեսարիոց  
թալասէն Մահուսի Կարապէտ Աշըզ  
Թրապ մականուանեալ Հայազգին Ար-  
քեայ երթալուլ Աշըզութիւն կ'ընէ .  
և ժամանակէ մը վերջը կը հիւանդա-  
նայ . տեղոյն մեր ազգ այիններէն Սուե-  
փանեան մահուսի Յովհաննէս աղսն  
հիւանդանոցի տեսչն և զօրապէտին  
կը գիմէ խնդրելով, որ հիւանդը զօ-  
րաց հիւանդանոցը փոխադրեն գար-  
մանելու համար : Խոքա եւս հրաման  
կ'ընէն անմիջապէս հիւանդը հնի կը  
փոխադրուի և պէտք եղած խնամք-  
ները կը տարուին : Բայց Աշըզ Թրապէ  
կենաց վախճանը հասած լինելով բը-  
մըշեակ ոն գեղերը իրեն չոգնելով եր-  
կու ամիս Տէրութեան հիւանդանոցի  
մէջ ողատապարուելէն և խնամուելէն  
զինի, իւր մահկանացու կեանքը կը  
կ'ըէ :

Տեղոյն զօրապէտներէն Ահմատ  
պէջ և խսնցիլ պէջ հազարապէտները  
լուր կը զրկեն Հայազգի Յովհաննէս  
աղային թէ ձեր ազգէն մեր հիւան-  
դանոցը պատսպարուող Աշըզ Թրապէն  
վախճանեցաւ, եկէք վերցուցէք : Առ  
այս Յովհաննէս աղան Ակնցի Ղուկա-  
սեան Գէորգ աղային կը գիմէ լուր կը